

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՏՎԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Գևորգ Հարությունի Պապոյան

ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր, տնտեսական հարցերի
մշտական հանձնաժողովի անդամ, ՀՊՏՀ դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՀՀ կառավարության ծրագրում կարևոր առաջնահերթությունների մեջ է ներառված կոռուպցիայի դեմ պայքարը, որի շրջանակներում կառավարությունը բավականին մեծ նշանակություն է տալիս ստվերային տնտեսության կրճատմանը և դրա միջոցով բյուջետային մուտքերի աճին: Հատկանշական է, որ գործընթացը բավականին հաջող է ընթանում և միայն 2019թ. առաջին կիսամյակի տվյալներով բյուջետային մուտքերը գերազանցել են 2018թ. նույն ցուցանիշը 24.7%-ով¹: Ինչպես երևում է ՊԵԿ նախագահի վերոնշյալ հոդվածում, աճը հիմնականում ապահովվել է հարկային եկամուտների ավելացման հաշվին, հետևաբար, կարծում ենք, նախկինում ստվերը մեծամասամբ պայմանավորված էր (և ներկայում էլ այդպես է) թաքցված հարկերով:

Առհասարակ ստվերային տնտեսության դեմ պայքարում կարծում ենք 2 հիմնական արդյունավետ մեթոդ կա.

1. Պետությունը՝ իր վարչարարությամբ կամ ստվերից դուրս գալուն խթանող միջոցառումներով:
2. Հասարակությունը՝ իր վարքագծով:

Հասարակության վարքագծը կարող է լինել ուղղակի և անուղղակի, մասնավորապես, որպես ուղղակի գործոնի ամենավառ օրինակ կարող է հանդես գալ զանգվածային կերպով ՀԴՄ կտրոնների պահանջումը՝ վճարված գումարի դիմաց, իսկ անուղակի կերպով, կարծում ենք, ամենալավ գործիքը զանգվածային անկանխիկ վճարումների իրականացումն է, որը գրեթե չեզոքացնում է բոլոր այն ստվերային ռիսկերը, որոնք առկա են կանխիկ դրամաշրջանառության պարագայում:

ՀՀ-ում աշխատավարձերի վճարման կարգը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Մասնավորապես, օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ աշխատավարձը կարող է վճարվել բանկային վկայագրով, չեկերով կամ աշխատողի նշած բանկային հաշվին դրամական փոխանցումով: Աշխատանքային օրենսգիրքը կանխիկ վճարումների արգելք չի սահմանում²:

¹ <https://banks.am/am/news/interviews/17732>, Դավիթ Անանյան, Մտորումներ իրականի շուրջ:

² <https://www.arlis.am/>, ՀՀ Աշխատանքային օրենսգիրք:

ՀՀ օրենսդրությունն անկախիկ վճարումների համար նախատեսում է հետևյալ մեթոդները.

- վճարումներ բանկային հաշվին,
- վճարումներ քարտով,
- վճարումներ էլեկտրոնային փողով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունն իր հերթին ցույց է տալիս, որ տնտեսապես և տեխնոլոգիապես զարգացած երկրների մեծ մասում աշխատավարձերի վճարումը իրականացվում է բացառապես անկանխիկ եղանակով: Այս առումով նշենք, որ մեր երկրում քաղաքային բնակավայրերում այս մասով չեն կարող խնդիրներ առաջանալ, քանի որ քարտով վճարումների մշակույթը ՀՀ-ում տարածվել է աստիճանաբար՝ 2000-ականների սկզբից և էականորեն նպաստել է անկանխիկ վճարումների ծավալի մեծացմանը: Բացի այդ բանկային համակարգը բավականին զարգացած է ոչ միայն մայրաքաղաքում, այլև ՀՀ մարզերում, և արդեն իսկ անկանխիկ աշխատավարձի վճարումը բավական չափով ներդրված է ողջ երկրում, մասնավորապես պետական հատվածում գրեթե ամբողջապես և զգալի չափերով նաև մասնավոր հատվածում:

Այսօր բավականին բարձր է գնահատվում նաև մասնավոր հատվածում աշխատավարձերի, ինչպես նաև կենսաթոշակների անկանխիկ վճարման տեսակարար կշիռը, հետևաբար կարծում ենք, որ ժամանակն է ՀՀ-ում քայլ առ քայլ գնալու աշխատավարձերի անկանխիկ վճարման: Վերջինս, ժամանակի ընթացքում, հանգեցնելու է սովետի շարունակական կրճատման, քանի որ, ինչպես վերը նշել ենք, ՀՀ-ում առկա է բավականին մեծ չափով սովետային տնտեսություն, ինչն էլ, կարծում ենք, զգալի չափով պայմանավորված է մանրածախ ոլորտում կանխիկ շրջանառության առկայությամբ: Այս քայլով վստահաբար կնվազեցվի նաև կանխիկի շրջանառությունը, քանի որ անկանխիկ ստացած աշխատավարձով անկանխիկ գնումները կլինեն շատ ավելին, քան այն դեպքում, երբ քաղաքացին ստանում է աշխատավարձը կանխիկով և, ըստ էության, հազվադեպ կլինեն դեպքերը, երբ այդ գումարը քաղաքացին կզցի որևէ հաշվեհամարների վրա և կօգտագործի անկանխիկ եղանակով: Այս մասով նաև հարկ ենք համարում նշել, որ սա առաջին հերթին վարքագծային, մշակութային հարց է և մեր կողմից կատարված սպառողական վարքագծի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքացիները, որպես կանոն, բազմաթիվ գործոնների ազդեցության տակ ավելացնում են անկանխիկ վճարումների ծավալները:

Մյուս կողմից, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ դեռևս բազմաթիվ ծառայություններ (տաքսիներ, կայանատեղիներ և այլն), սպասարկման օբյեկտներ (խանութներ, կրպակներ, գեղեցկության սրահներ և այլն) հազեցած չեն համապատասխան տեխնիկական

հնարավորություններով և ի վիճակի չեն կազմակերպել անկանխիկ սպասարկում: Մակայն կարծում ենք, որ բնակչության կողմից զանգվածային կերպով անկանխիկ վճարման անցնելը կհանգեցնի նրան, որ մի կողմից բանկերի կողմից մատուցվող բանկային ծառայությունները կդառնան ավելի հասանելի և “կմոտենան սպառողներին”, մյուս կողմից տնտեսվարող սուբյեկտները իրենք կնախաձեռնեն իրենց մոտ անկանխիկ վճարումների հնարավորության ստեղծումը, այլապես ժամանակի ընթացքում իրենք կհայտնվեն ոչ մրցունակ իրավիճակում:

Հասկանալի է, որ աշխատավարձի ամբողջական անկանխիկ վճարման անցնելու համար անհրաժեշտ է բանկային համակարգի համապատասխան մակարդակի զարգացվածություն: Այս առումով նշենք, որ ՀՀ-ում ֆիզիկական անձանց շրջանում կանխիկ վճարմանը զուգահեռ բավականին տարածված է նաև քարտերով վճարման մշակույթը: Սրա հետ կապված նշենք, որ ՀՀ տարածքում վճարային քարտերի թողարկումը և սպասարկումը հիմնականում իրականացվում է Արքա քարտերով վճարումների միասնական համակարգի միջոցով, որը ստեղծվել և ներդրվել է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի նախաձեռնությամբ: Համակարգի անդամ բանկերի կողմից թողարկվում և սպասարկվում են Արմենիան Քարդ քարտերով վճարումների միասնական համակարգի ԱրՔա տեղական քարտեր, Վիզա կամ ՄաստերՔարդ միջազգային քարտային համակարգի քարտեր: ՀՀ տարածքում սպասարկում են նաև DINERS CLUB, AMEX միջազգային քարտային համակարգի, ինչպես նաև HSBC խմբի քարտեր¹:

Ինչպես ցույց է տրված աղյուսակ 1-ում, վերջին տասնամյակում ավելի քան 5.1 անգամ ավելացել է վճարային քարտերով կատարված գործառնությունների քանակը՝ 8.8 մլն-ից հասնելով 45.1 մլն-ի, իսկ քարտերով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է 4.3 անգամ: Էական չափերով ավելացել է նաև POS տերմինալների քանակը՝ 2720-ից դառնալով 8796, այսինքն դրանց թիվը ավելացել է 3.2 անգամ: Այս ցուցանիշները և դրանց անընդհատ աճող տեմպը թույլ են տալիս եզրականել, որ դրանց աճը առաջիկա տարիներին ևս կշարունակվի, իսկ կհանգեցնի նրան, որ ժամանակի ընթացքում անկանխիկ գործարքները կգերազանցեն կանխիկին՝ դրանով իսկ նպաստելով ստվերի կրճատմանը:

¹ <https://www.cba.am/am/sitepages/pspaymentinstruments.aspx>, Վճարային գործիքներ:

Աղյուսակ 1

Քարտերով կատարված գործառնությունները ՀՀ-ում¹

| Տարեթիվ | Քարտերով կատարված վճարումներ | | POS տերմինալներ |
|---------|------------------------------|------------------|-----------------|
| | Ծավալ (մլն դրամ) | Քանակ (մլն դրամ) | |
| 2009թ. | 8,846,164 | 428,209 | 2720 |
| 2010թ. | 11,292,931 | 558,350 | 3730 |
| 2011թ. | 14,565,988 | 740,020 | 5155 |
| 2012թ. | 18,800,105 | 986,107 | 6674 |
| 2013թ. | 20,540,950 | 1,108,032 | 6834 |
| 2014թ. | 24,824,677 | 1,275,470 | 6954 |
| 2015թ. | 27,942,967 | 1,363,389 | 6414 |
| 2016թ. | 29,994,635 | 1,381,842 | 6971 |
| 2017թ. | 34,814,537 | 1,562,278 | 7303 |
| 2018թ. | 45,126,591 | 1,860,774 | 8796 |

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ զգալի տարածում են ստացել ոչ միայն Արբա քարտերը, այլև VISA-ն և Master Card-ը, իսկ ընդհանուր քարտերի ծավալը աճել է գրեթե 3 անգամ՝ 729298 հատից դառնալով 2024070 հատ (աղյուսակ 2)²:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետությունում վճարային քարտերի տարածում

| Տարեթիվ | Արբա քարտ | VISA | Master Card | Այլ քարտեր | Ընդամենը |
|---------|-----------|--------|-------------|------------|----------|
| 2010 | 306070 | 269771 | 115943 | 37514 | 729298 |
| 2011 | 391936 | 363691 | 181455 | 40354 | 977436 |
| 2012 | 492126 | 520703 | 264539 | 45581 | 1322949 |
| 2013 | 564503 | 652398 | 299815 | 46019 | 1562735 |
| 2014 | 546509 | 712211 | 320653 | 44684 | 1624057 |
| 2015 | 548521 | 789150 | 344365 | 47321 | 1729357 |
| 2016 | 521273 | 587671 | 416147 | 45667 | 1570758 |
| 2017 | 566768 | 608583 | 493796 | 45532 | 1714679 |
| 2018 | 629001 | 806299 | 545705 | 43065 | 2024070 |

¹ <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>, վիճակագրություն և հաշվետվություններ:

² <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>, Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը:

Նշված օրինաչափությունները հատուկ են ոչ միայն Հայաստանին, այլ աշխարհ մնացած երկրներին և պայմանավորված են առաջին հերթին տեխնոլոգիաների զարգացմամբ: Անկանխիկ վճարումների ոլորտում առավել առաջատար են տեխնոլոգիապես զարգացած երկրները:

Հատկանշական է, որ վերջին տարիներին տնտեսական զարգացման առումով կտրուկ առաջընթաց են ապահովել այն երկրները, որոնք մեծ ներդրումների միջոցով կարողացել են ստեղծել ենթակառուցվածքների համալիր, ընդհուպ մինչև ունիվերսալ վճարային համակարգեր (օրինակ՝ Չինաստանը): Այսինքն անկանխիկ վճարումները սերտ փոխկապակցված են տեխնոլոգիական և տնտեսական զարգացումների հետ և հանդիսանում են դրանց ապահովման առանցքային կողմերից մեկը:

Անկանխիկ դրամաշրջանառության ոլորտում վերջին տասնամյակ ամենախոշոր աճ ապանովող երկրներից մեկը Չինաստանն է, որտեղ աճը 2010-2018 թվականներին եղել է ավելի քան 4.5 անգամ¹: Հատկանշական է, որ այս քայլին Չինաստանում հասել են ոչ թե գերզարգացած բանկային համակարգի միջոցով, այլ այդ նպատակով ներդրված հատուկ ունիվերսալ քարտերի միջոցով, որոնցով հնարավոր է ոչ միայն վճարում կատարել, այլև դրանք հատուկ կրիչներ են և իրենց վրա եղած ինֆորմացիայի հաշվին փոխարինում են նաև անձնագրին, դիպլոմին և այլ պետական փաստաթղթերի: Հատկանշական է, որ Չինաստանում այս համակարգը ևս դիտարկվում է ստվերի դեմ պայքարի գործիքների շրջանակում, երբ վարչական «փափուկ» միջամտությունը հանգեցրել է հատկապես մանրածախ առևտրաշրջանառության ծավալների առավել թափանցիկացմանը և ստվերի կրճատմանը:

Այն թեզը, որ անկանխիկ վճարումներն ապահովում են ստվերի կրճատումը ապացուցվում է նաև այն հանգամանքով, որ աշխարհի տնտեսապես առաջատար և բնակչության բարձր կեսամակարդակ ապահովող երկրներում, որտեղ նաև ցածր է ստվերի մակարդակը, անկանխիկ դրամաշրջանառության ծավալը շատ բարձր է: Մասնավորապես Ադյուսակ 3-ում ներկայացված են անկանխիկ շրջանառությամբ աշխարհի առաջատար երկրները:

¹ <https://www.ceicdata.com/en/china/non-cash-payment-instrument> .

Անկանխիկ շրջանառությամբ աշխարհի առաջատար երկրները¹

| Երկիր | Դեբետային քարտեր ունեցող քաղաքացիների տեսակարար կշիռը, % | Սպառողական ծախսերում դեբետային քարտերով կատարված անկանխիկ վճարումների ծավալը, % |
|-----------------|--|---|
| Բելգիա | 86 | 93 |
| Ֆրանսիա | 69 | 92 |
| Կանադա | 88 | 90 |
| Մեծ Բրիտանիա | 88 | 89 |
| Շվեդիա | 96 | 89 |
| Ավստրալիա | 79 | 86 |
| Նիդերլանդեր | 98 | 85 |
| ԱՄՆ | 72 | 80 |
| Գերմանիա | 88 | 76 |
| Հարավային Կորեա | 58 | 70 |
| Սինգապուր | 81 | 69 |

Այնուամենայնիվ արձանագրենք, որ ՀՀ-ում, ինչպես նաև հետխորհրդային երկրներում, բնակչության մոտ կանխիկ վճարումները շարունակում են մնալ ամենատարածված վճարման ձևը՝ հատկապես մանրածախ առևտրում:

Հատկանշական է, որ բանկոմատների խտությամբ ևս Հայաստանը էապես զիջում է աշխարհի շատ երկրների, սակայն մի շարք երկրների համեմատությամբ էլ ունենք բավականին լավ ցուցանիշ, օրինակ առաջ ենք այդ դասակարգման մեջ այնպիսի երկրներից, ինչպիսիք են Լատվիան, Հունաստանը, Արգենտինան, Դանիան, Լիտվան (աղյուսակ 4)²:

Բանկոմատների հասանելիությունը մի շարք երկրներում (100000 բնակչի հաշվով)

| | | |
|----|-------------|--------|
| 1. | Մակաո | 313.15 |
| 2. | Կանադա | 227.82 |
| 3. | Սան Մարինո | 182.89 |
| 4. | Պորտուգալիա | 168.04 |

¹ <https://www.paymentscardsandmobile.com/cashless-volumes-war-cash-continues-2/> .

² https://www.theglobaleconomy.com/rankings/ATM_machines/ .

| | | |
|-----|--------------|--------|
| 5. | ՌԴ | 163.93 |
| 6. | Ավստրալիա | 162.01 |
| 7. | Խորվաթիա | 140.38 |
| 8. | Մեծ Բրիտանիա | 128.13 |
| 20. | Ուկրաինա | 97.67 |
| 44. | Հայաստան | 63.69 |
| 46. | Լատվիա | 61.88 |
| 47. | Հունաստան | 61.53 |
| 54. | Բելառուս | 55.63 |
| 62. | Դանիա | 50.06 |
| 66. | Լիտվա | 46.75 |

Վերոնշյալ աղյուսակը, կարծում ենք, ևս փաստում է այն մասին, որ գոնե քաղաքային բնակչության մասով, ՀՀ-ը պատրաստ է անցնել աշխատավարձի վճարման պարտադիր անկանխիկ տարբերակի, քանի որ բնակչության սպասարկման համար բանկոմատների և տերմինալների քանակը բավարար է:

Հարկ է նշել, որ զանգվածային կերպով միանգամից աշխատավարձի անկանխիկ վճարման անցնելը իրապես կարող է խնդիրներ առաջացնել բնակչության որոշակի խմբերի մոտ, մասնավորապես այս առումով խոցելի վիճակում կհայտնվեն հաշմանդամություն ունեցող անձինք և գյուղական բնակավայրերում ապրողները, որոնք ունենալու են հասանելիության խնդիրներ և բարդություններ՝ կապված անկանխիկ վճարումներ կատարելու և դրամական միջոցները կանխիկացնելու հետ: Եթե առաջին խմբի մարդկանց համար առկա են հասանելիության ֆիզիկական բարդություններ, ապա երկրորդ խմբի համար խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ հարյուրավոր բնակավայրերում, չկան բանկային մասնաճյուղեր, բանկոմատներ, իսկ առևտրային և սպասարկման օբյեկտներում հաճախ բացակայում է անկանխիկ վճարման հնարավորությունը: Սակայն մյուս կողմից պետք է հաշվի առնել, որ արդեն իսկ այդ բնակավայրերում ապրող տասնյակ հազարավոր մարդիկ իրենց աշխատավարձը ստանում են անկանխիկ եղանակով, մասնավորապես դպրոցներում, համայնքապետարաններում, մանկապարտեզներում, մշակույթի տներում վաղուց արդեն անցել են անկանխիկ աշխատավարձի վճարման, ինչը չի առաջացրել որևէ խնդիր:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է անկանխիկ վճարմանը անցնել փուլային տարբերակով և որպես առաջին փուլ անհրաժեշտ է օրենսդրական լուծմամբ սահմանել, որ քաղաքային բնակավայրերում, որտեղ բավականին զարգացած են բանկային շառայությունները, 10 և ավել

աշխատող ունեցող գործատուները վճարեն աշխատավարձը անկանխիկ: 10
և ավել թիվը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՓՄՁ-ների մասին
օրենքով մինչև 9 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտները
համարվում են գերփոքր և այդ սուբյեկտների համար ըստ էության
միանգամից անկանխիկ վճարման անցնելը կարող է լուրջ խնդիրներ
առաջացնել, և այդպիսի կազմակերպություններից շատերին դա կստիպի
վարել առանձին հաշվապահություն, ինչը կարող է առաջացնել լրացուցիչ
ծախսեր, հետևաբար, կարծում ենք, առաջին փուլով այս
կազմակերպություններին չպետք է պարտադրել անցնել անկանխիկ
վճարման: Իսկ հաջորդ փուլով, բանկային համակարգի զարգացմանը
զուգահեռ հնարավոր կլինի անցնել նաև ողջ երկրում պարտադիր
անկանխիկ վճարումների համակարգի:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՏՎԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Գևորգ Հարությունի Պապոյան

ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական
հանձնաժողովի անդամ, ՀՊՏՀ դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Հոդվածում քննարկված է ժամանակի ընթացքում ՀՀ-ում
աշխատավարձի բացառապես անկանխիկ վճարելու միջոցով ստվերի
կրճատման հնարավորությունը: Այս գործընթացին զուգահեռ պետք է
զարգանա նաև բանկային համակարգը, վերջինիս ծառայությունները
դառնան ավելի հասանելի, իսկ բնակչության շրջանում պետք է աշխատանք
տարվի անկանխիկ վճարումների մշակույթի զարգացման ուղղությամբ:

Բանալի բառեր՝ անկանխիկ վճարում, ստվեր, աշխատավարձ,
անկանխիկ շրջանառություն, աշխատանքային օրենսգիրք, բանկային քարտ:

БЕЗНАЛИЧНАЯ ОПЛАТА ТРУДА КАК КЛЮЧЕВОЙ ИНСТРУМЕНТ В БОРЬБЕ С ТЕНЬЮ

Геворг Арутюнович Папоян

Депутат Национального Собрания РА, член постоянной комиссии по
экономическим вопросам, доцент кафедры маркетинга АГЭУ,
кандидат экономических наук

Аннотация

В статье обсуждается переход исключительно на безналичные выплаты
зарплат, что в свою очередь приводит к уменьшению доли тени в экономике.
Параллельно с этим процессом должна также развиваться банковская система,

ее услуги должны быть более доступными, а среди населения должна быть проведена работа по развитию культуры безналичных платежей.

Ключевые слова: безналичный расчет, безналичные платежи, тень, зарплата, безналичный оборот, трудовой кодекс, банковская карта.

NON-CASH PAYMENTS AS A KEY TOOL IN THE FIGHT AGAINST SHADOW

Gevorg Harutyun Papoyan

Member of National Assembly of RA, Member of Standing Committee on Economic Affairs, Associate Professor in ASUE, the Chair of Marketing, Candidate of Economic Sciences

Abstract

The article discusses the transition exclusively to non-cash salary payments, which in turn leads to a decrease in the share of shadow in the economy. In parallel with this process, the banking system should also develop, its services should be more accessible, and steps should be taken towards spreading the culture of non-cash payments among the population.

Keywords: cashless payments, non-cash payments, shadow, salary, non-cash turnover, labor code, bankcard.